1. Հայցը բավարարել. ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավարի կողմից՝ ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի և «ՊՐՈ ՇԻՆ» ՍՊ և «Բիլդինգ Կոնստրուկշն» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի միջև 29.03.2024 թվականին կնքված թիվ «ՍՄ-ՄՀ-ԲՄԱՇՁԲ-24/01» ծածկագրով պայմանագրի միակողմանի մասնակի լուծման վերաբերյալ 16.09.2025 թվականի թիվ Ե-1782 ծանուցումը (որոշումը) ճանաչել անվավեր:

2. Որպես դատական ծախս Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքից հօգուտ «Պրո Շին» ՍՊԸ-ի բռնագանձել 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Դանիել Միսեյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE82-5230-4EB2-97AB հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am